ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
«ԻՋԵՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ЗАО« ИДЖЕВАНИ БЖШКАКАН
КЕНТРОН»
ТАВУШСКОГО МАРЗПЕТАРАНА

REPUBLIC OF ARMENIA,CJSC «IJEVANI BJSHKAKAN KENTRON»

377260 ՀՀ ,ք.Իջևան, Նալբանդյան 1
ՀԸ,,Г.Иджеван,ул. Налбандяна 1
RA IJEVAN St Nalbandyan 1

☎ 00374 263 40313
Էլ. փոստ – ijevanmedikalcenter@mail.ru

N 333
24.06.2024թ.

«Ագաստ» ՍՊԸ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանգիրը միակողմանի լուծման մասին

«Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Ագաստ» ՍՊԸ-ի միջև 03.01.2024թ. կնքված N ԻԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/1-4 ծածկագրով պայմանագրի շրջանակներում «Ագաստ» ՍՊԸ-ին 03.06.2024թ.-ին պատվեր-հայտ է ներկայացվել, որից 9, 57, 83 չափաբաժինները թերի են մատակարարվել:

Պայմանագրի համաձայն ապրանքը պետք է մատակարարվի Պատվիրատուից պատվերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, սակայն մինչ օրս պատվերը մատակարարվել է թերի:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.9-րդ կետը՝ «Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն 2024թ.-ի հունիսի 24-ից միակողմանի լուծում է 03.01.2024թ.-ի N ԻԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/1-4 Պայմրանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտվել է պայմանգրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուր կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ եթե սույն ծանուցումը ստանալուց հետո հինգօրյա ժամկետում Ձեր կողմից վճարվի պայմանագրի կատարման և որակավորման ապահովման գումարները թերի մատակարարված չափաբաժինների մասով (9, 57, 83 չափաբաժինները), ապա

«Ագաստ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի
տնօրեն՝ Է.Գրիգորյան

Կատարող՝
գնումների համակարգող - հաշվապահ
Արփինե Բուղդարյան
Հեռ. (0-33) 261014